



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Ա.Մ. ՆԱՅԱՆՔՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ
ՄԻԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՓՈԽ ԱՐԲԱՅԱՅՐ
ՀՈԳՇ. Տ. ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՕՅԱՆԵԱՆԻ**

Երեքշաբթի, 26 Մայիսի կեսօրին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ազգային Առաջնորդարանին մէջ ընդունեց այցելութիւնը Միիթարեան Միաբանութեան փոխ աբբահայր Հոգշ. Տ. Վահան Վրդ. Օհանեանի, որ կարճատեւ այցելութեան մը համար կը գտնուի Լոս Անճելըս:

Հայր Վահան Օհանեան Լոս Անճելըս ժամանած է, Աբբահօր հետ միասին ներկայ ըլլալու համար Միիթարեան վարժարանի 30ամեակի տօնակատարութեան, որ տեղի պիտի ունենայ շաբաթավերջին: Հանդիպումը առիթ ծառայեց տեղեկութիւններ փոխանակելու Ազգ. Առաջնորդարանի ու միաբանութեան ազգանուէր ու մշակութային գործունեութեանց մասին: Առաջնորդ Սրբազանը յաջողութիւն մաղթեց փոխ աբբահօր՝ իր առաքելութեան ու աշխատանքներուն մէջ:

**PRELATE WELCOMES ASSISTANT ABBOT OF THE
MEKHITARIAN MONASTERY REV. VAHAN OHANIAN**

On Tuesday, May 26th, 2009, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy assistant abbot of the Mekhitarian Monastery in Venice Rev. Vahan Ohanian.

Rev. Ohanian and the Abbot Most Rev. Fr. Yeghia Kilaghbian are currently in Los Angeles to attend the 30th anniversary celebration of the Mekhitarist Fathers' School which will take place this weekend. During their meeting the Prelate and Rev. Ohanian exchanged information regarding the endeavors of their respective institutions. The Prelate wished Rev. Ohanian success in his upcoming endeavors and presented him with a memento prior to his departure.